ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունիսի 2015թ. N 21

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի հունվարի 20-ի N15-01/2 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2015 թվականի հունվարի 22-ի զեկուցագիրը

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «5.Մելքոնյան Հերմինե – ուսուցիչ» բառերը փոխարինել «5.Տոմիկյան Նարեկ – ուսուցիչ» բառերով «6.Գրիգորյան Մանուշակ – ուսուցիչ» բառերը փոխարինել «6.Պողոսյան Աննա – ուսուցիչ» բառերով, «8. Հասոյան Դաշիդ – ծնող» բառերը փոխարինել «8.Մարտիրոսյան Յուրա - ծնող» բառերով:

բ. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում կազմում «2.Աբրահամյան Վարդգես – մարզպետարան» բառերը փոխարինել «2.Ստեփանյան Հովհաննես – մարզպետարան» բառերով,

գ.«Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում կազմում «1.Աբրահամյան Վարդգես – մարզպետարան» բառերը փոխարինել «1.Թովմասյան Արմեն – մարզպետարան» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ